Հավելված 2

2023 թ. «02» «28»-ին

կնքված N *ԴՏՊ-1160-11009/ԱՐՄ-1/23* պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N_7_**

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» |
| **Դրամաշնորհի N** | ԴՏՊ-1160-11009/ԱՐՄ-1/23 |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 14.02.2023-31.12.2023 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.04.2023-30.06.2023 |
| **Ներկայացման օր** | 06.07.2023 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Նաիրա Առաքելյան,<br>ՀԿ Նախագահ |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

| |
|---|
| Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.<br>• **Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում.** Հաշվետու ժամանակահատվածում նոր շահառուների ներգրավում չի եղել, առկա են նախկին 8 շահառուների գնահատված կարիքները համապատասխան մեթոդաբանությամբ:<br>• **Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրի մշակում.** Քանի որ հաշվետու ժամանակահատվածում նոր շահառուների ներգրավում չի եղել, նոր ծրագրեր չեն մշակվել, առկա են նախորդ 8 շահառուների անհատական սոցիալական ծրագրերը, որոնց հիման վրա մատուցվում են անհրաժեշտ պարապմունքները և ծառայությունները:<br>• **Ամենօրյա պարապմունքների և ծառայությունների մատուցում.** Ըստ հաստատված ժամանակացույցի և անհատական զարգացման պլանների՝ շահառուներին մատուցվել է անհատական և խմբային անհրաժեշտ սոցիալական ծառայություններ, սոցիալական խորհրդատվություն, իրազեկման աշխատանքներ, համակարգչային դասընթացներ: Իրականացվել է անհատական խորհրդատվություն մի քանի շահառուների հետ: Կատարվել է խմբային աշխատանք, որը նպաստել է շահառուների շփման, հաղորդակցման և համագործակցության հմտությունների զարգացմանը: Մի քանի շահառուներ միասին սովորում և հմտանում են շախմատ խաղալով: Տիֆլոմանկավարժը կազմել է հանելուկներ բրայլյան այբուբենով: Այդպիսով նրանք զարգացնում են մաթեմատիկական հմտությունները խաղի միջոցով, սովորում են |

թվերը և բրայլյան և արաբական ձևաչափով, շահառուն ճանաչում է թվերի գրաֆիկական պատկերները, ծանոթանում է կազմությանը, զարգացնում է մաթեմատիկական հմտությունները 10-ի սահմանում: Շահառուներից մի քանիսի մոտ արդեն հաջողվում է սպիտակ ձեռնափայտի միջոցով հասկանալ խոչընդոտի անվնաս շրջանցման տեխնիկան և հաջողությամբ շրջանցել այն: Կարողանում են աստիճանները անվնաս բարձրանալ, իջնել սպիտակ ձեռնափայտի օգնությամբ: Տիրապետում են ավելի վստահ, կարողանում են ձայնային կողմնորոշիչներ օգտագործելով A կետից հասնել B կետ, օգտագործելով իրենց ստացած գիտելիքները և հմտությունները: Շահառուներից մեկը սպիտակ ձեռնափայտով, իրեն ծանոթ ճանապարհով արդեն ինքնուրույն կարողանում է գնալ ավտոկայան և հասարակական տրանսպորտով գնալ իր բնակավայր: Ավագ մասնակիցների միջոցով պատրաստվել է բրայլյան գրքեր կրտսեր մասնակիցների համար: Իրականացվել է մաթեմատիկական խաղ- վարժություններ: Մաթեմատիական աշխատանքները իրականացվել է 2-ի բազմապատկման շուրջ, զույգ և կենտ հաշիվ, տասնյակներով գումարում հանում: Շահառուներից մեկի հետ իրականացվել է տարիքային գնահատման թեստ, որի արդյունքները քննարկվել է տիֆլոմանկավարժի հետ: Շարունակվում են աշխատանքները սպիտակ ձեռնափայտով, հաշվելով, ծափերով, ձայների ուղղությամբ կատարել քայլեր: Տրվել են ռուսերեն և անգլերեն տերմինների բացատրություններ և հանձնարարականներ: Շարունակվում են էկրանի ընթերցող ձայնային ծրագրերի միջոցով սմարթֆոններից և համակարգիչներից օգտվելու հմտությունների ուսուցում: Շահառուներից մի քանիսի հետ դեռևս ամրապնդվում է windows համակարգում նավարկման և խմբագրման ռեժիմների մանրամասն ուսումնասիրումը և յուրացումը, ֆայլերի տեսակների ուսումնասիրություն, փաստաթղթերի պատրաստում: Շահառուները սովորում են հատուկ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար հավելվածներ, որոնք օգնում են ինքնուրույն , անկախ կյանք վարելուն, մասնավորապես CASH READER (հայկական թղթադրամները ճանաչելու) հավելվածը: Իրականացվել է ծանոթացում

| |
|---|
| արհեստական բանականության հետ, CHAT GPT, ուսումնասիրում և սովորում են տեղորոշման ծրագրերը, սոցիալական ցանցերի ուսումնասիրություն: Հայկական առաջին սոցիալ-կրթական տեղեկատվական հարթակի ուսուցում, ծանոթացում tiflotech.am: Նոր ծրագրերի տեղակայում և հեռացում: |

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

| |
|---|
| Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:<br>Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.<br>• Ամսական՝ 8 պարապունք, ընդամենը՝ 24 պարապմունք<br>• ՏՀՏ դասընթացներ՝ շաբաթական 2 պարապունք, ընդամենը՝ 6 պարապմունք<br>• Սպիտակ ձեռնափայտի ուսուցում՝ շաբաթական 2 պարապունք, ընդամենը՝ 6 պարապմունք<br>• Սոցիալական խորհրդատվություն՝ ամսական 2 հանդիպում, ընդամենը՝ 6 հանդիպում |

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն է դրվել ԱՋԿ ՀԿ-ի սոցիալական էջում/ |

| |
|---|
| https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02cYWtMJVopBEPhcJKLywDLD2bzoP6GRrXWBmEttcwKcUapfTxJJ89E26vEtTGANx1l&id=100004968826339 https://www.facebook.com/WhitecaneArmenia/posts/pfbid02HfaJv7tJ9BwMkzvERqmtjB8DZSzHtMtkWBh5aHUKSPVqJknMSJBQy8mwQEv7ZgCkl https://www.facebook.com/armavirdc/posts/pfbid02QiZrxM1NjCCxeS4Ak4k2x3gjZ1p2se7R6e4HX7PhJAs58X6ATSY9oYZ5jpLE55Tol |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի իրականացման խոչընդոտներ չեն գնահատվել: |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Շահառուների ցուցակը կցված է սույն հաշվետվությանը:

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածում նախատեսված գործողություններն են.

- Շահառուների սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված աշխատանքներ
- Իրազեկման աշխատանքներ
- Շահառուների՝ սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ
- Շահառուների՝ ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ
- Սպիտակ ձեռնափայտի միջոցով այց ժամանցային վայրեր և սննդի կետեր
- Անհատական մոդուլների ժամանակացույցում առցանց փաթեթների ծառայությունների ուսուցում, օրինակ՝ Google, Yandex
- Ճանաչողական և տեղորոշման հավելվածների ուսուցում

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

- Ծրագրի շահառուներից բրայլյան համակարգին տիրապետող շահառուն, շարունակում է իր գիտելիքները և փորձը մեր աջակցությամբ փոխանցել կրտսեր ընկերոջը, որն էլ ապահովում է երկու շահառուների շփման հմտությունների զարգացմանը և փոխհամագործակցության մթնոլորտի ձևավորմանը:
- Սոցիալական աշխատողը Արմավիրի համայնքապետարան ներկայացրել է առաջարկություն, գլխավոր ճանապարհների լուսացույցերի վրա ձայնային ազդանշաններ տեղադրելու վերաբերյալ:
- Ծրագրի շրջանակներում կամավորը, մասնագիտությամբ տիֆլոմանկավարժ, շարունակում է իր օգնությունը աշխատանքներում: Կամավորության ընթացքում զարգանում է փոխօգնության, համագործակցային հմտությունները:
- «Արմավիրի զարգացման կենտրոն»-ը մեկ շահառուի նվիրել է համակարգիչ, որպեսզի աշխատանքներն ավելի արդյունավետ և նպատակային լինեն:
- Ծրագրի շահառուները ներկա գտնվեցին Tiflotech.am կայքի շնորհանդեսին: Վերջինս սոցիալ-տեղեկատվական և կրթական նախագիծ է՝ նախատեսված տեսողության խնդիրներով անձանց համար, ովքեր օգտագործում են տեղեկատվական տեխնոլոգիաները էկրան ընթերցող ծրագրերի միջոցով:
- ԱՁԿ ՀԿ ներկայացուցիչները, ինչպես նաև «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագրի շահառուները մասնակցել են «Մենք միասին ենք» ծրագրի աշխատաժողովին, որը կազմակերպվել էր Ծաղկաձորում:

Digitally signed by ARAKELYAN NAIRA 5114670166
Date: 2023.07.06 12:50:25 AMT